ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 181

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-053-0319-0015 կադաստրային ծածկագրով 0.065 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	07-053-0319-0015 կադաստրային ծածկագրով 0.065 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Նաիրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Պռոշյան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «14» «մայիսի» 2024 թ.